№ 35 Մարտի 5 (17) 1880 Մարտի 5 (17) № 35

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Մօսկվայից։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։—«Մշակի» հեռագիրները։—Յայտարարութիւններ։ —Բանասիրական։ Խենթը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

—

Ֆրանսիական սենատը, ինչպէս արդէն գիտեն մեր ընթերցողները, վիճաբանում է այժմ ազատ կրթութեան նոր օրէնքի վրա։ Ժիւլ Ֆէրրի մինիստրի առաջարկած նոր օրէնքի առաջին վեց յօդուածները արդէն ընդունված են ձայների բազմութեամբ, չը նայելով որ նշանաւոր հռետորներից շատերը, ինչպէս Լաբուլէ և Ժիւլ Սիմօն խելքին զօռ տալով, խօսեցին այդ օրէնքի ընդունվելու դէմ։ Ընդունված յօդուածների թւում կայ մի յօդուած, որով կաթօլիկ «ազատ» անուանված համալսարանները Ֆրանսիայում զրկվում են իրանց ուսանողներին գիտնական աստիճանների համար դիպլօմներ տալու իրաւունքից։

Սենատի ձախ կողմը ընդունելով Ֆէրրիի օրէնքի առաջին վեց յօդուածները, ապացուցեց որ բաժանվեցաւ իր առաջվայ առաջնորդներից, որոնք ազատութեան անունով պատրաստ էին պաշտպանել կղերականներին և եզուիտներին անգամ....

Թէև աջակողմեանները դեռ յոյս չեն կորցնում որ օրէնքի ծրագրի եօթերորդ յօդուածը կը մերժվի սենատի մեծամասնութեամբ, բայց ինչպէս երևում է, հանրապետական կառավարութիւնը հաւատացած է որ իր առաջարկած օրէնքը կընդունվի և ուրեմն խելացի նոր գաղափարը, որ բարձրագոյն ուսումը պէտք է լինի միմիայն պետութեան ձեռքում, և ոչ թէ կղերականների ձեռքում, յաղթող կը հանդիսանայ եզուիտների, կղերականների և առհասարակ խաւարասէրների կուսակիցների վրա։

Ժիւլ Ֆէրրի չէ թագցնում որ առաջարկվող նոր օրէնքի եօթերորդ յօդուածը ունի կատարելապէս քաղաքական բնաւորութիւն. Նա համարձակ կերպով խոստովանվում է որ այդ յօդուածը ուղղված է անմիջապէս եզուիտների դէմ։ «Եզուիտների միաբանութիւնը, ասեց մինիստրը իր ճառի մէջ, ներկայացնում է միշտ մի ներքին դաւադրութիւն ամեն պետութեան դէմ և այդ տեսակ գաղտնի և վտանգաւոր դաւադրութեանը պետութիւնը չէ կարող անտարբեր ոգով վերաբերվել, աչքի առջև ունելով պետութեան թէ բարոյական և թէ քաղաքական զարգացման գործը։» Ֆէրրի աւելացրեց որ Ֆրանսիայում եզուիտներին համբերում էին միայն, բայց այդ միաբանութեան դիրքը երկրի մէջ միշտ ապօրինի էր, օրէնքից դուրս էր։

Այդ խօսքերով Ժիւլ Ֆէրրի ուզեց ակնարկել որ եթէ սենատը չընդունի օրէնքի ծրագրի եօթերորդ յօդուածը, հանրապետական կառավարութիւնը մեծ հեշտութեամբ կը կարողանայ ուրիշ ճանապարհով և ուրիշ հողի վրա շարունակել պատերազմ եզուիտների դէմ։ Եւ ճշմարիտ, հարկաւոր է միայն յիշել այն պատմական իրողութիւնը, որ Կարլ X-րդ թագաւորի հրովարտակից յետոյ, որով եզուիտների միաբանութիւնը աքսորվում էր Ֆրանսիայից, ոչ մի ուրիշ կառավարչական հրովարտակ երբէք չը ոչնչացրեց այդ կարգադրութիւնը և այնուհետև եզուիտներին միմիայն համբերում էին Ֆրանսիայում, բայց նրանք այդ երկրի ոչ մի օրէնքով պաշտպանված չէին։

Եթէ օրէնքի եօթերորդ յօդուածը կընդունվի, եզուիտները թէև կը մնան Ֆրանսիայում, բայց զրկված կը լինեն որ և է դպրոցական գործ առաջնորդելուց։ Բայց եթէ սենատը կը մերժի յիշեալ յօդուածը, այն ժամանակ հանրապետական կառավարութիւնը շատ հեշտ կերպով կարող է, մանաւանդ պաշտպանված լինելով պատգամաւորների ժողովի մեծամասնութեան վճռով, վերականգնեցնել Կարլ X-ի թագաւորութեան ժամանակ հրատարակված օրէնքը, որ մինչև այժմ իր զօրութիւնը չէ կորցրել Ֆրանսիայում

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Ը.

Նոյն աւուր գիշերային պահուն ծերունի Խաչօի որդիները բոլորը դարձել էին դաշտային աշխատութիւններից։ Սրահի մի անկիւնում վառվում էր իւղային ճրագը և նրա բեկբեկվող լոյսը տարածում էր իր չորս կողմը աղօտ ճառագայթներ։ Տանուտէրը իր որդիների հետ բոլորել էին ընթրիքի սեղանի շուրջը։ Նրանք լուռ ուտում էին. խօսում էր երբեմն ծերունի հայրը միայն։ Գարնանային թարմ օդը անուշ զովութեամբ թափվում էր սրահի մէջ, և հեռուից լսելի էր լինում ոչխարների բառաչելու ձայնը, որ դառնում էին արօտից։ Թօնրատնում հարսները ընթրիք էին պատրաստում հովիւների և մշակների համար։ Նրանք դեռ ոչինչ չէին կերել, պէտք է բոլորին կերակրէին, յետոյ իրանք ևս սեղան նստէին աղջիկների հետ։ Փոքրիկ մանուկները խաղալուց յոգնած, վաղուց քնած էին, առանց մի բան ուտելու։

Ընթրիքից յետոյ ծերունի Խաչօի որդիները գընացին իրանց բանին։ Նրանք դեռ շատ գործ ունէին կատարելու. պէտք էր անասուններին նայել, պէտք էր արտը ջրել, որովհետև այս գիշեր ջրի հերթը նրանց էր պատկանում. պէտք էր ջրաղացը գնալ ալիւր աղալու համար, մի խօսքով, հազար ու մէկ գործեր կային։

Սեղանը վեր քաղեցին. Խաչօն դեռ նստած էր, իսկ նրա մեծ որդին, Հայրապետը, որ մնաց հօր մօտ, չիբուխ էր պատրաստում նրա համար։ Հօր և որդու մէջ տիրում էր խորին լռութիւն։ Կարծես այս գիշեր տխրութեան դևը իր սև թևերով նստած լինէր այդ խաղաղ ընտանիքի սրտի վրա։

—Ո՞րքան ալիւր տարան քրդերը, հարցրեց հայրը չիբուխը փոքր ինչ ծխելուց յետոյ։

—Ուղիղ տասն և երկու բեռն, պատասխանեց որդին վրդովված ձայնով։

—Ինչը բէկը ախար տասն բեռ խնդրեց։

—Ջուալները իրանց հետ էին բերել, շատ մեծ էին, մինչև բերանները լցրին, կարծես, փողը նոցա էին տուել անիծածները։

—Ու՞մ եզներով տարան։

—Մեր եզներով. փառք տուէք Աստծուն, երբ գոնէ եզները կը դարձնեն։ Ես վախում եմ, որ եզներին էլ ալիւրի հետ ուտեն։

—Այդպիսի անազնւութիւն չի անի բէկը։

—Քրդին ազնւութիւն ով է տուել։ Միթէ քիչ է պատահել, որ բեռն էլ տանող անասունի հետ կուլ են տուել։ Ես իրան ասեմ, այնքան չեմ ցաւում այսօրվայ հարիւր սկու համար և տասներկու բեռ ալիւրի համար, բայց ինձ այն է նեղացնում, որ ծրի հաց ենք տալիս և այդ հացը մեր ձեռքով, մեր անասուններով պէտք է տանենք և հասցնենք նրանց տանը, որ վայելեն։ Այդ ինչ Աստուծոյ պատիժ է։ Ես չեմ իմանում մինչև երբ այդ քրդերը պէտք է մեզ թալանեն։ Գալիս են, տանում են ու տանում, և տարածը յետ չես կարող առնել։ Միշտ ուզում են, միշտ ուզում են, ոչ ամօթ ունեն և ոչ խղճմտանք։ Կարծես, մեզ Աստուած նրանց համար կերակրող է ստեղծել։

—Դու չես իմանում, որ այդպէս է, պատասխանեց ծերունին, աւելի թունդ կերպով ծխելով իր չիբուխը, կարծես թէ, աշխատում էր նրա ծըխով խեղդել սրտի բարկութիւնը։—Ի՞նչ կարող ենք անել, որդի, եթէ մեր կամքով, մեր ձեռքով չը տանք, նրանք զօռով կը տանեն։ Այդ էլ լաւ է, որ խնդրելով և բարեկամութեան անունով են կողոպտում մեզ։

—Մենք ինքներս ենք սովորեցրել նրանց այդ աւազակութիւնը, ասաց որդին.—կարող ենք չը տալ, այն ժամանակ քուրդը ստիպված կը լինի ինքն ցանել, և իր քրտինքով աշխատել իր հացը, բայց մենք սովորեցնում ենք նրանց ծուլութիւն, սովորեցնում ենք մեր հաշուով ապրել։

—Այդ ուղիղ է, պատասխանեց հայրը տխուր ձայնով.—բայց մեզ դժուար է և շատ դժուար է միանգամով ոչնչացնել այն, ինչ որ մեր պապերը տնօրինեցին մեզ համար։ Մենք քաղում ենք նրանց ցանած յիմարութիւնների դառն պտուղը։ Հիմայ լսիր, որդի, ես իմանում եմ, որ քո սրտի մէջ եփ է գալիս ատելութիւնը, ես իմանում եմ, որ ստրկութիւնը սաստիկ վշտացնում է քեզ.—բայց դարձեալ հարցնում եմ, ինչ ճար կայ, ինչ կարող ենք անել։ Եթէ ինչ որ ուզում են, չը տանք, կը թըշնամանան մեզ հետ. մէկ էլ տեսար, ոչխարների ամբողջ հօտը սարից յափշտակեցին, տարան։ Ո՞ւմը կարող ենք գանգատվել. ո՞վ կը լսէ մեր ձայնը։ Այն մարդիկը, որ նշանակվել են չարութիւնը բառնալու և արդարութիւնը պաշտպանելու համար, բոլորը աւազակներ են, սկսեալ վալիից, փաշայից, մինչև վերջին մուդիրը և գայմագամը։ Մի աւազակ մի ուրիշ աւազակի հետ քոյր և եղբայրներ են, և ինչպէս ասում են՝ «շունը շնից, երկուսն էլ մի տնից»։ Դու ինքդ քո աչքով տեսար, որ Արզրումի վալին, փոխանակ շղթաներ ուղարկելու, որ մի այսպիսի երևելի աւազակապետին, որպէս Ֆաթթահ-բէկն է, տանեն և խեղդեն,—փոխանակ այդ անելու, նրա համար մի գեղեցիկ ձի ընծայ է ուղարկում, մի եղեռնագործի համար, որ մեր ամբողջ գաւառը լցրել է արիւնով և արտասուքով։ Երբ որ վալին, երկրի նահանգապետը այսպէս է վարվում, էլ ով է մնում, որ մենք յայտնենք նրան մեր սրտի ցաւը.—Մնում է միայն Աստուած, բայց Աստուած էլ մեր ձայնը չէ լսում, երևի, շատ են մեր մեղքերը.....

Որդին ոչինչ չը պատասխանեց, հայրը շարունակեց.

—Մենք հայ ենք. Աստուծոյ անէծքը գրած է մեր ճակատի վրա. մենք մեր ձեռքով մեր տունը քանդում ենք։ Անմիաբանութիւնը, երկպառակութիւնը, նախանձը, թշնամութիւնը և հազար ու մէկ այս տեսակ չարութիւններ շատ ժամանակներից բոյն են դրել մեր հոգու մէջ,—և մենք կրում ենք այդ մեղքերի պատիժը։ Քուրդը մեղաւոր չէ։ Եթէ մեր մէջ միութիւն լինէր, եթէ մեր մէջ սէրը լինէր, քուրդը, յիմար և ծոյլ քուրդը ինչ կարող էր անել։

Նա հրամայեց կրկին վառել չիբուխը, և որդին կատարելով հօր ցանկութիւնը, խօսեց.

—Մենք վեց եղբայրներ ենք, հայր, եթէ դու այսօր մի ակնարկութիւն արած լինէիր, մեր վեցը բաւական կը լինէր արտաքսելու մեր տնից Ֆաթթահ-բէկի մօտ եռեսուն ձիաւորներին, և նրանք միւսանգամ չէին համարձակվի այսպէս լրբութեամբ ոտք կոխել մեր շէմքի վրա։

—Այդ ես իմանում եմ, որդի, բայց ինչ շահ։ Դուք կը կռվէիք նրանց հետ, զուցէ մէկին, երկուսին, շատերին կը սպանէիք, բայց էգուց քրդերի ամբողջ ցեղը կը թափվէր մեր տան վրա, և մեզ մեր տան հողի հետ հաւասար կանէին։ Ո՞վ հայը կը գար մեզ պաշտպանելու։ Ոչ ոք։ Կարելի է շատերը կուրախանային։ Այդպէս է հայը։ Բայց քուրդը այդպէս չէ։ Եթէ մի ցեղից մէկին սպանում ես, ամբողջ ցեղը վրէժխնդիր է լինում նրա արեան համար, որովհետև քրդերի մէջ միութիւն կայ. ցեղի մէկ անդամի արիւնը ամբողջ ցեղին է պատկանում, կարծես թէ, բոլորը մի ընտանիքի զաւակներ լինէին։ Բայց մեր մէջ կա՞յ այսպիսի միութիւն։ Ամեն մարդ իր գլխի դարդն է քաշում, ամեն մարդ իր անձի համար է մտածում. ուրիշին ինչ լինում է, թող լինի։ Նրան ինչ հոգ, երբ ինքը հանգիստ է, երբ իր մալին չեն դիպչում։ Բայց

և գործ դնելով այդ մինչև այսօր չը գործադրված օրէնքը, կատարելապէս աքսորել եզուիտներին Ֆրանսիայից։

Երևում է որ կառավարութիւնը հաստատ վճռած է այդ համարձակ, խելացի և արդար քայլն անելու։

Սենատի կղերական և աջակողմեան անդամների մեծամասնութիւնը ի հարկէ աւելի լաւ կը համարի որ եզուիտները համբերվեն Ֆրանսիայում, թէև զրկված լինեն հայրենիքի ուսման գործի անմիջապէս ղեկավարելու իրաւունքից, քան թէ բոլորովին աքսորված լինեն Ֆրանսիայից։ Եւ այդ պատճառով կարելի է կարծել որ աջակողմեանները ճարահատված ստիպված կը լինեն ընդունել Ֆէրրիի օրէնքի եօթերորդ յօդուածը։

Դրանով Ֆրանսիան մեծ քայլ արած կը լինի լուսաւորութեան և ազատութեան, մի խօսքով քաղաքակրթութեան գործի մէջ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

Փետրվարի 12-ին

Ախալցխան չէ քնում՝ շարժումը մեծ է. հանգանակութիւնը շարունակվում է. հարուստները ոչինչ չեն տալի, նոքա միայն մտածում են որ մի հայրենասէր ջէնտլմէն իրանց մէջ բացառութիւն է երևում, բայց Յովհաննէս Մուտաֆեանը բնաւ ուշադիր չէ հայ կրօնասէրների տրտունջին. ազգային պարտականութիւնը և քաղաքի մեծաթիւ չունևոր դասի օրհնանքը նա աւելի վեր է դասում. ամենքի աչքին նա սիրելի է ինչպէս պայծառ բացառութիւն։ Նորա սկսած հանգանակութիւնը քիչ ժամանակվայ մէջ հասաւ երեք հարիւրի. երիտասարդ հանգանակողը ուզում է հասցնել հինգ հարիւրի։

Մեծ. Յով. Մուտաֆեանին աջակից է միւս պայծառ բացառութիւն՝ մեծ. Յով. Գեղամեանցը։

Նա մի տեսակ perpetum mobil-նէ. նա ամեն տեղ է, ամեն բանի մէջ է, միշտ շարժուն է. նա քաղաքագէտ է, նա ուսումնական վարչութեան գործակից, նա բեմական գրուածների հեղինակ տեղական բարբառով, նա ռէժիսէօր, նա դերասան, նա լրագրի թղթակից, նա ամեն բանի ինիցիատօր։ Սովատանջների համար նա արդէն երեկոներ և ներկայացումներ է պատրաստում. եկամուտը նմանապէս հինգ հարիւրից պակաս չէ կարող լինել։ Դատեալ հարուստները մտմտում են, դարձեալ ամենքից մեռում անուշադիր։

Երկու ինտելիգէնտ երիտասարդների օրինակից չէ ուզում յետ մնալ և մի երիտասարդ արհեստաւոր. ժամագործ Լազարեանը նմանապէս հանգանակութիւն է սկսել իր խանութը այցելողների մէջ. գործը շատ յաջողակ է գնում։

Այսօր այցելեցի «Նոր—Արշալոյս» օրիորդական ուսումնարանը։ Փոքրիկ հայուհիները ևս հանգանակութիւն են բացել իրանց մէջ. տղայոց ուսումնարանների մի ներկայացուցիչ պիտի ստորագրէ իր անունը մի օրիորդի անուան տակ և այդպէս մի փոքրիկ հայ և մի փոքրիկ հայուհի պիտի ներկայանան համերաշխ ազգային գործի մէջ. նուիրատուութիւնները ձեզ ուղարկելով ապագայ սերունդի այդ երկու ներկայացուցիչները պիտի խնդրեն «Մշակի» խմբագրութեան իրանց հաւաքած օգնութիւնը ուղարկել միայն իրանց հասակակից սովատանջներին վասպուրականի նահանգում։

Այսպիսով Ախալցխան խոստանում է ուղարկել «Մշակի» խմբագրութեան չուտով հազար բուբլիից աւելի։ Բաս միւս քաղաքները. բաս Բագուն, բաս Երևանը, բաս մեռացածները. չը լինի թէ այնտեղ աղաները զօրեղ են և նոցա ահից ոչ ոք չէ կարողանում իր ցանկութիւնը արտայայտել և պարտքը կատարել. չենք կարծում որ ուրիշ քաղաքներում երիտասարդները աւելի վախկոտ են, աւելի ընկճված. ուրեմն նոքա երիտասարդներ չեն, այլ երիտասարդ ծերեր. չենք կարծում, սպասում ենք . . . .

Այսօր պատահելով մի չատ հասարակ մարդու, ահա ինչ լսեցի նորանից. «եթէ մենք մարդասիրութիւնից էլ չուզենանք օգնել թիւրքիացի հայերին, ասեց նա, պիտի օգնենք մեր սեփական ապահովութեան համար, որովհետև հէնց որ գարուրը բացվեց, սովալուկ ազգը մորեխի պէս կը թափվի մեր գլխին և մեր հացը մեր ձեռքից զօռով կը խլէ»։—Իսկ Հայաստանը, ասեցի,—Հայաստանը քանդվելը ի հարկէ կը քանդվի, բայց մենք էլ պակաս չենք պատժվի, պատասխանեց նա, առաջարկելով նոյն ժամանակ մի միտք, որի իրագործելը նոյնչափ հեշտ է, որչափ և չհաւատաս։

Նա ասեց, թէ Ախալցխայի գաւառում, եթէ հաւաքող լինի, կարող է հարիւր հազար պուդի չափ կարտոֆիլ ճարել, որ փուռնի մէջ չորացնելով, շատ թեթևանում է, իսկ ջրի մէջ թաթախարած ժամանակը կարելի է լինում ինչպէս սուխար ուտել։ Ուրեմն տանելով Հայաստան գոնէ չորացրած կարտոֆիլ, ասեց նա, հմմ Հայաստանը կարելի է ազատել, հմմ էլ մեզ, քանի որ կարտոֆիլ տանելը այդչափ հեշտ է ինչպէս նորա էժանութեան համար, այնպէս էլ թեթևութեան պատճառով։

—Լաւ ես ասում, եղբայր, բայց կատարողը ով կը լինի, նկատեցի նորան։ Այս օրհասական հարցմունքը կարծես փչրեց խեղճ հայի վերջի կթիլ հաւատը իր ազգի վերածնութեան վրա. խորը հառաչելով, նա մեռաց աչքերը գետնին գցած....

Գր. Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՑԻՑ

—

15 Փետրվարի

Շտապում եմ հաղորդել ձեզ այն ջերմ համակրութիւնը, որով ընդունեց Մոսկուայի Հայ հասարակութիւնը «Մշակի» և «Փորձի» հրաւէրները՝ սովատանջ վանեցոց օգնութիւն հասցնելու համար։ Ամեն տեղ «Մշակն» ու «Փորձն» են թերթում. ամեն տեղ ցաւակցութեան ձայներ են լսվում։—Լաւագոյն է այն յոյսը, որ չատերը դնում են Էջմիածնի վրա. ինքն էլ հասարակութիւնը պէտք է սկսէ և ինքն էլ օգնէ։

Այս օրերս, սկզբնաւորութեամբ տեղւոյն աւագ քահանայ Սուրէնեանցի՝ լինելու է մի երաժշտական—գրականական երեկոյ մեր սովատանջ թիւրքահալածակ Հայերի համար։ Այս ազնիվ ձեռնարկութեան օգնելու և նրա յաջողութեան նպաստելու դիտմամբ՝ ինչպէս և միշտ—համակրեց Լազարեան ճեմարանի տեսուչ պ. Քանանեանցը, որ ուրախութեամբ բացեց ճեմարանի դռները այդ հանդիսաւոր երեկոյի համար։ Երեկոն լինելու է ճեմարանի դահլիճներում, որոնք այն օրը փառաւորապէս կը զարդարվեն. նրան կը մասնակցեն Մոսկուայի ոչ միայն հայազգի բարձր ընտանիքներից—տիկնայք, այլ և օտարազգի նշանաւոր գերդաստաններից, որպէս և մի քանի երևելի երաժիշտներ։

Բացի գործիքական (инструментальный) երաժշտութենից և երգերից, ուր կը լինեն և հայոց յայտնի երգերը և եղանակները, կը կարդացվեն մի քանի ընտիր հատուածներ մեր նշանաւոր հեղինակների գրուածներից (Աբովեան, Պատկանեան)։

Հանդիսաւոր երեկոն կը լինի 28-ին ամսոյս Ս. վարդանանց տօնի օրը. այս պատճառով երեկոյի սկզբին Լ. ճեմարանի աշակերտները կերգեն այդ աւուր պատշաճ մի քանի ազգային երգեր։

Ցաւսով ենք, որ Մոսկուայի հայ հասարակութիւնը իր ներկայութեամբ կապացուցանէ այն ջերմ համակրութիւնը, որ միշտ ունեցել է զէպի ամենայն մի բարենպատակ ձեռնարկութիւն, և թող ներելի լինի մեզ կարծել, որ այսպիսի հանգամանքներում, այսպիսի ճգնաժամին միայն սորանով չէ սպառվելու նրա ազգասիրական և եղբայրասիրական զգացմունքը. աւելի մեծ և նշանաւոր հանգանակութիւն—ահա ինչ ենք ակնկալում։

Լսում ենք, որ հայ ուսանողները իրանց մէջ ստորագրութիւն պիտի բաց անեն վանեցոց համար։

* * *

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Զաքաթալ, 22 փետրվարի

Կարդալով ձեր լրագրի մէջ այն յօդուածները, որոնք հրատարակում են մեր հայերի ուշադրութիւնը վանայ և նրա շրջակայքում բնակվող՝ մեր հայ եղբայրների և քոյրերի սովից առաջացած անասելի դրութեան վրա, չը կարողացայ առանց ուշադրութեան թողուլ այդ մարդասէր հրաւէրը, ուստի, վճռեցի չուտով ժողովել մեր Զաքաթալու հայ տիկիններից մի օժանդակութիւն մեր սովատանջ ազգակիցների համար։

Այդ մասին մտադրութիւնս յայտնելով տիկին Մարիամ Մելքոնեանցին, նրա հետ մեր կարողութեան չափ, կարճ միջոցում, ժողովեցինք մեր գիտ մայրերից և քոյրերից 68 բուբլի։

Այժմ, գոնէ, զգում ենք մեզ թեթևացած մեր սեպուհ և սրբազան պարտականութիւնից։ Թող չարժվին նաև մեր անտես հեռի եղբայրների և քոյրերի կարեկցութիւնը օգնութիւն հասցնելու մեր հայ սովատանջներին, որոնց կեանքը շատ թանգ է մեր ապագայի համար։ Ահա նամակս ուղարկում եմ ձեզ ժողովված լումայքն, և խնդրում եմ հրատարակել մեր անունը։

Ամենայն յարգանաց հանդերձ մնամ ձեր հաւատարիմ ծառայ

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

Փետրվարի 12-ին

Ախալցխան չէ քնում՝ շարժումը մեծ է. հանգանակութիւնը շարունակվում է. հարուստները ոչինչ չեն տալի, նոքա միայն մտածում են որ չեն իմանում տխմարները, որ «մէկը ամենի համար է, իսկ ամենը մէկի համար»։

Ծերունի Խաչօն կարդացած մարդ չէր, բայց կեանքը, փորձը, աշխարհը չատ բաներ սովորեցրել էին նրան։ Բնական խելքը զարգացել էր կեանքի փոթորիկների մէջ, այս պատճառով նրա դատողութիւնների մէջ երբեմն զանվում էին այնպիսի ճշմարտութիւններ, որ միայն կարող էին մատչելի լինել այն տեսակ անձերին, որոնք չատ խորին կերպով իմաստասիրել էին մարդկային կենցաղավարութեան պայմանները։ Նա խօսեց.

—Հանգամանքները մեզ այնպիսի դրութեան մէջ են դրել, որ ուրիշ կերպ գլուխ պահել չենք կարող. ստիպուած ենք աշխատել, վաստակել և մեր աշխատանքով մեր թշնամուն կերակրել։ Ուրիշ ճար չը կայ։ Մենք պէտք է բարեկամութիւն պահպանենք մեզ կողոպտողի հետ։ Ֆաթթահ-բէկը, իրաւ է, մեզ կողոպտում է, բայց դարձեալ չենք կարող մերժել նրա բարեկամութիւնը, որքան էլ կեղծ լինէր։

—Ինչու, հարցրեց որդին։

—Նրա համար որ, մեծ աւազակի հետ բարեկամ լինելով, մարդ ազատվում է փոքր աւազակների ձեռքից։ Դրանք բոլորն միմնանց հետ կապված են։ Լիմայ օտար քրդերը գիտենալով, որ Ֆաթթահ-բէկը մեզ հետ լաւ է. էլ մեր ոչխարներին, անասուններին և վարուցանքին չեն դիպչում, և եթէ մի բան գողանում են, նա զգոնում է և յետ է դարձնում մեզ։

—Դրանից ինչ շահ. հաշիւը մի և նոյնն է դուրս գալիս, պատասխանեց որդին,—Ֆաթթահ բէկը մեզ «մի ձու է տալիս, բայց փոխարէնը մի ձի է ստանում»։ Նա չէ թողնում, որ մի ուրիշ քուրդ մեր ոչխարը գողանայ, բայց ինքը, հարկաւորած ժամանակ, հարիւրներով ոսկիներ է առնում մեզանից։ Մենք նրա կամենատու կովն ենք, պահում է, պաշտպանում է նրա համար միայն, որ ինքը վայելէ մեր կաթը։

—Այդ բոլորը ճշմարիտ է, որդի, ես հասկանում եմ, պատասխանեց հայրը.—բայց պէտք է այն ևս հասկանալ, որ հայը մեր պապերից չատ առաջ սովորել է այդ կերպով իր գլուխը պահել։ Ես, ի հարկէ, չեմ կարդացել, թէ ինչ է գրված գրքերի մէջ. բայց մի ժամանակ Ուէքիլիսայի վանքում կար մի վարդապետ, նա ինձ պատմում էր, թէ ամեն ժամանակ, երբ մեր երկրի վրա յարձակվել են թշնամիներ, հայերը փոխանակ սրով և կրակով դուրս գալու նրանց առջև, հանդիպել են թշնամուն թանգագին ընծայներով—մատուռգարանների մէջ լցրած ոսկիներով։ Նրանք մեզ սովորեցրին փոխանակ պատժելու, կաշառել մեր թշնամիներին։ Նրանք սովորեցրին կայքը տալ գլուխը ազատելու համար։

—Բայց պէտք չէ, որ մենք պապերի սխալը շարունակենք մինչև յաւիտեան, կտրեց որդին հօր խօսքը։

—Հին սխալը մոռանալով ուղղել չատ դժուարին է. նա կատարվել է հարիւրաւոր տարիների ընթացքում, և այդքան տարիներ պէտք են նրան ուղղելու համար։ Եկ դու ժողովրդի հասկացրու, թէ թշնամու հետ այլ կերպ կարելի է վարվել, թէ նա էլ մեզ նման մարդ է, թէ նրա մարմինը երկաթից չլինված չէ, թէ երբ նա զէնքերով գալիս է մեզ կողոպտելու, կարելի է զէնքով պատասխանել նրան.—վերջապէս հազար ու մէկ այս տեսակ քարոզներ կարդա, դու կարծում ես, ժողովուրդը կը հասկանայ քեզ։ Նա քեզ խենթի տեղ կը դնէ և կը ծիծաղէ քո յիմարութիւնների վրա։ Բայց այս հասկացողութիւնը նրա մէջ նոր բան չէ, նա ժառանգել է իր պապերից։

Որդին չը պատասխանեց, նա գտնում էր հօր խօսքերի մէջ մի ճշմարտութիւն, որ անհերքելի էր։ Բայց մի և նոյն ժամանակ մտածում էր, միթէ չէ կարելի փոխել ժողովրդի նախապաշարմունքը։ Այս պատճառով հարցրեց նա.

—Լաւ, ղեցուք թէ մեր պապերը այս ճանապարհով են գնացել և մենք էլ հետևում ենք նրանց օրինակին։ Բայց պէտք չէ՞ փոխել ճանապարհը, երբ տեսնում ենք, որ նա տանում է դէպի կորուստ։ Պէտք չէ՞ հասկացնել ժողովրդին, որ նա մոլորված է։

—Հարկաւոր է, բայց ով պէտք է հասկացնէ. Այդ պէտք է անեն այն մարդիկը, որոնք ընդունել են իրանց վրա ժողովրդին խրատելու, ճանապարհ ցոյց տալու և բան հասկացնելու պարտաւորութիւնը։ Այդ պէտք է անեն մեր տէրտէրները, վարդապետները, բայց նրանք քարոզում են. «եթէ աջ երեսիդ խփելու լինեն, ձախն էլ դարձրու»։ Այդ պէտք է անեն մեր որդիների վարժապետները, բայց մեր ամբողջ գաւառում մի հատ օրինաւոր վարժատուն չը կայ։

—Այդ խօսքերի մէջ քեզ հետ չեմ կարող համաձայնվել, հայր, ասաց որդին,—ապա ինչու քուրդը, որ ոչ տէրտէր ունի, ոչ վարդապետ ունի և ոչ էլ վարժապետ ունի, բայց իմանում է, թէ մարդը ինչպէս պէտք է վարվի իր նմանների հետ։ Ո՞վ սովորեցրեց նրան, թէ մարդը առանց զէնքի կոյր հաւի նման է լինում, ով հանի, գլխին կը տայ։

—Քուրդը տէրտէր, վարդապետ և վարժապետ չունի, բայց չէ՞յխ ունի, նրա չէ՞յխը, թէև հազար գլուխ է, բայց ինքն էլ է զէնք կրում, և իր ժողովրդի հետ միասին գնում է յափշտակելու անզէն մարդերի հարստութիւնը։ Նա երբէք չէ քարոզում, թէ այդ բաները մեղք են։ Բայց ինչ են քարոզում մեր տէրտէրները....

Որդին լուռ էր։ Հայրը շարունակեց.

—Այդ բոլոր անարգութիւնների մէջ մի մխիթարութիւն կայ, այն է, որ որքան էլ գողանում են մեզանից, որքան էլ յափշտակում են, դարձեալ մեր ամբարները լիքն են մնում, բայց քուրդը ուտելու հաց չէ գտնում։

—Դիտէ՞ք, հայր, այն առածը, թէ «գողը իր համար տուն չի կարող շինել, բայց տուն ունեցողի տունը կը քանդէ»։ Քուրդը թէև չէ վարում, չէ ցանում, չէ հնձում, իր տանը հաց չէ գտնում, միշտ քաղցած է մնում,—բայց աշխատող հայի հացը ձեռքիցը խլելով, նրան էլ իր նման քաղցած է թողնում։ Դու մեր տունը օրինակ մի բեր, հայր, մտածիր, թէ որքան հայեր կան, որոնք քրդերի պատճառով աղքատ են և ուտելու հաց չունեն։

—Այդ իրաւ է, որդի, բայց մի ուրիշ բան էլ կայ, այն էլ պէտք է գիտենալ։ Դու տեսնում ես ոչխարներին, այսքան մորթում են, այսքան փշ չայնում են, բայց դարձեալ նրանք աճում են, բազմանում են և անգին հօտեր են կազմում։ Իսկ գայլը, թէև կեղեքում է, ուտում է ոչխարներին, բայց միշտ քաղցած է մնում, և երբէք չէ բազմանում։ Դու տեսել ես գայլերից մի հօտ։ Գայլը գազան է, այսօր յափշտակեց մի ոչխար, կերաւ, կշտացաւ, էգուց չը գիտէ, թէ ինչով պէտք է կերակրվի։ Նա պէտք է միշտ որսայ, բայց որսը ամեն անգամ չէ պատահում։ Որով ապրողը մի օր կուշտ է լինում, միւս օր քաղցած։ Քուրդը—գայլ է, իսկ մենք—ոչխար։

Այսպէս էր բացատրում ծերունին իր լեզուով այն բանը, որ գիտնականների լեզուում կոչվում է «էվոլուտիոնական խաղաղ, անարիւն մրցութիւն»....

Որդին պատասխանեց նրան.

—Էս կարծում եմ, հայր, եթէ ոչխարները հովիւներ և պահպանողներ չունենային, այսօր գայլերը ոչ մի ոչխար չէին թողնի աշխարհում, և դժուար կը լինէր ոչխարներին հօտեր կազմել։ Մենք, իրաւ է, ոչխարներ ենք, բայց առանց հովիւի։ Երբ մեր վիճակը այդպէս է, մնում է մէկ բան միայն գայլերից ազատվելու համար,—որ մենք էլ գայլերի նման առաջներ և ճանկեր ունենանք....

(Կը շարունակվի)